ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **աղբահանության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի հունվարի 09-ին** կնքված N **<<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/1-1>>** պայմանագրում **2019 թվականի հունվարի 10-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայության մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ծառայության մատուցումն իրականացնելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

**09.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/1-1>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան <<10>> 01 2019թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ԲԱՐՄԱՔ>> ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Ա. Թադևոսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 09.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/1-1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>** | **<<ԿԱՏԱՐՈՂ>>** |
|---|---|
| **Չարենցավան համայնք** | **<<ԲԱՐՄԱՔ>> ՍՊԸ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **ք. Չարենցավան, Շինարարների փողոց թիվ 2** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **<<Արդշինբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900132172033** | **Հ/Հ 247300022099** |
| **ՀՎՀՀ 03022497** | **ՀՎՀՀ 02807838** |
| | **Էլ. հասցեն goharbarmaq@mail.ru** |
| | **հեռ. (094) 10-83-00** |
| **Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան** | **Տնօրեն՝ Ա. Թադևոսյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Հավելված
09.01.2019թ. կնքված <<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/1-1>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<10>> 01 2019թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 90511150/501 | Աղբահանության ծառայություններ | 4,800,000 | 9,600,000 | 14,400,000 | 19,200,000 | 24,000,000 | 28,800,000 | 33,600,000 | 38,400,000 | 43,200,000 | 48,000,000 | 52,800,000 | 58,000,000 | 58,000,000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>
Չարենցավան համայնք
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132172033
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան
(ստորագրությունը)
Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ԲԱՐՄԱՔ>> ՍՊԸ
ք. Չարենցավան,
Շինարարների փողոց թիվ 2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247300022099
ՀՎՀՀ 02807838
էլ. հասցեն goharbarmaq@mail.ru
հեռ. (094) 10-83-00

Տնօրեն՝ Ա. Թադևոսյան
(ստորագրությունը)
Կ.Տ